

ԽԱՉՔԱՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

1988 թվականը հայ ժողովրդի համար դարձավ անդառնալի կորուստների ու ծովեզր վշտի տարի, տարեսկզբին սումգայիթյան կոտորածները, տարեվերջին կործանարար երկրաշարժը: Քարուքանդ եղան քաղաքներ, գյուղեր, բազում օջախներ մարեցին հավետ, մեր հարազատները ընդմիշտ հեռացան մեզանից ու որպես հուշ մնացին մեր հիշողություններում ու հոգիներում միայն: Խաթարվեց մեր կյանքի ընթացքը:

Անմեղ զոհերի հիշատակը հավերժացնելու, ապագայի նկատմամբ հույսով ու հավատով լցվելու նպատակով հայոց հողի վրա, Ախուրյանի շրջանի Մուսայելյան գյուղում, այս անգամ արդեն աղետի գոտում կանգնեցվեց ևս մեկ Խաչքար-հուշարձան: Խաչքար՝ խորհրդանիշ մեր հավատքի, սիրո, մեր անցյալի ու ապագայի:

Խաչքարը **նվիրատվությունն** էր գյուղի դպրոցի ուսուցիչ Ռաշիդ Առաքելյանի, որը բոլորի վիշտը իր անձնականն է համարում: Այն պահին կամ այսօր, երբ մարդիկ զբաղված էին իրենց հոգսերով, քանդակագործը չորս ամիս օր ու գիշեր անընդհատ քրտնաջան և անշահախնդիր աշխատում էր, հույսով ու հավատով լեցուն իր զգացմունքներն ու միտքն էր հաղորդում հսկա քարաբեկորին և մուրճի յուրաքանչյուր հարվածի հետ հիշում նրանց, ովքեր այլևս չկային, ովքեր զոհվել էին ահեղ երկրաշարժից: Արցունքախառն են այն հյուսվածքները, որոնցով զարդարված է չքնաղ և իր նմանակը չունեցող Խաչքարը, այն շատ յուրովի է, ու իր պարզությամբ մեծ խորհուրդ է հաղորդում դիտողին:

Մեծ նվերը, կերտված երկրաշարժի **համայն** զոհերի հիշատակին, երախտիքով ընդունվեց համագյուղացիների կողմից: Մնում էր բարեկարգել այն հրապարակը, ուր տեղադրվելու էր Խաչքարը, այսինքն Մեծ Եղեռնի և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հուշարձանների կողքին:

Այստեղ անկարելի է թվարկել անունները բոլոր երախտավորների, մարդիկ, ովքեր բարոյապես ու ֆիզիկապես սատարեցին Առաքելյանին հաղթահարելու ամեն մի խոչընդոտ ու դժվարություն: Առաքելյանի նախաձեռնությամբ գեղեցկացավ ու նոր տեսք ստացավ հին հուշահամալիրը: Գյուղի երիտասարդները հաճույքով էին կատարում ուսուցչի ամեն մի ցուցումն ու պահանջը:

Օրհնանքի արժանի այս օրինակելի ու հուսադրող գործը, կատարված մեր հայրենի գյուղերից մեկում, անշուշտ ապացույցն է մարդկային սիրո ու հոգու հզորության:

Հոկտեմբերի 7-ին՝ բացման օրը, հուշարձանը մեծ նվեր եղավ **Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից,** մարմարյա մի Խաչ, որն ամփոփվեց Մայր Խաչքարի կրծքին: Այս առիթով Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, առաջնորդը Շիրակի թեմի, Վեհափառ Կաթողիկոսի կարգադրությամբ հանդեսի օրը օրհնեց Խաչքարը, որը հետո դարձավ կենտրոնը վաղվա արբավայրի: Այսօր այստեղ բոլորը մոմեր են վառում և զենում են մատաղներ, ծաղիկներ են դնում և հարգանքի տուրք են մատուցում ու գլուխ խոնարհում աղետի մեր համայն զոհերի հիշատակի առջև:

Այս հուզիչ և միաժամանակ ուրախացուցիչ երևույթը դարերին կհասնի և կդառնա մարդկային մտքի ու կարողությունների ներդրման նոր ձգտում, հոգևորի և առարկայականի ներդաշնակության մեջ.

ԹՂԹԱԿԻՑ



Խաչքարաշինության վերականգնման վերջին փուլում գտնվող Ս. Հռիփսիմե եկեղեցու ընդհանուր տեսքը

Խաչքար-հուշարձանը